

ՊԵՆՏԻՄԱՆ ԴԱՌԱՆՈՒԹԻՒՆ

Յօդուած 1

Կը հաւատանք ամբողջ սրտով եւ բերնովնիս կը խոստովանինք, որ կայ միմիայն մէկ ու պարզ հոգեւոր էն, զոր Աստուած կը կոչենք՝ յաւիտենական, անիմանալի, անտեսանելի, անյեղլի եւ անվախճան, որ ամենակարող է, ամենագէտ, արդար եւ անսպառ աղբիւր ամէն բարիքի:

Յօդուած 2

Զինք կը ճանչանք երկու միջոցաւ: Առաջ իր արարչութեամբ, պահապանութեամբ եւ արար աշխարհին վրայ իր տիրապետութեամբ, որ մեր աչքին առջեւ կը բացուի գեղեցիկ գիրքի մը պէս, ուր բոլոր արարածները՝ մեծ եւ փոքր, կը ծառայեն իբրեւ գիրք, որոնք մեզի կ'օգնեն դիտել Աստուծոյ անտեսանելի բաները, ճանչնալ իր յաւիտենական իշխանութիւնը եւ աստուածութիւնը, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալը: Այս բոլոր բաները բաւական են համոզելու համար մարդերը եւ գիրենք ներելու անարժան կացուցանել: Եւ հոսկ ապա Ան կը ճանչցնէ ինքզինք մեզ առաւելապէս երեւելաբար սուրբ եւ աստուածային իր Բանին՝ Սուրբ Գիրքին միջոցաւ, որ այդպիսով մեզի անհրաժեշտ կը դառնայ ներկայ մեր կեանքին մէջ՝ իր փառքին եւ իրեններուն փրկութեան համար:

Յօդուած 3

Կը դաւանինք որ Աստուծոյ այս Բանը հաղորդուած կամ բերուած չէ մարդու կամ քով, այլ Աստուծոյ սուրբերն են որ խօսած են Սուրբ Հոգիէն մղուած, ինչպէս կ'ըսէ Պետրոս առաքեալը: Հոսկ ապա, եզակի իր հոգածութեամբ է որ մեր Աստուած իր ծառայ եղող մարգարէներուն եւ առաքեալներուն հրահանգած է գրի առնել այս պատգամները. Ան է որ իր մատով գրած է Օրինաց զոյգ տախտակներուն վրայ: Ասոր համար է որ այս տեսակ գրութիւնները կը կոչենք Սուրբ եւ Աստուածաշունչ մատեան:

Յօդուած 4

Սուրբ Գիրքը կը նկատենք երկու հատորները՝ Հին եւ Նոր Կտակարանները, կանոնական, որ անվիճելի եւ անառարկելի են: Իրենց թիւը Աստուծոյ եկեղեցիին մէջ հետեւեալն է. Հին Կտակարանի մէջ. Մովսէսի Հնգամատեանը, Յեսու, Դատաւորաց, Հռութ, Սամուէլի զոյգ գիրքերը, Թագաւորաց զոյգ գիրքերը, Մնացորդաց զոյգ գիրքերը, Առաջինը եզրասի, Նէեմեայ, Եսթերայ, Յովթայ, Սաղմոսաց, Սողոմոնի երեք գիրքերը, այսինքն Առակաց, Ժողովողի եւ երգ երգոց, չորս մեծ մարգարէներու. Եսայեայ, Երեմեայ, Եզեկիէլի եւ Դանիէլի: Ապա տասնեւերկու փոքր մարգարէից գիրքերը. Ովսեայ, Յովէլ, Ամովսի, Աբդիու, Յովնանու, Միքեայ, Նաւումի, Ամբակումի, Սոփոնեայ, Ագգիու, Զաքարեայ, Մաղաքեայ: Նոր Կտակարանի մէջ. չորս Աւետարանները. ըստ Մատթէոսի, ըստ Մարկոսի, ըստ Լուկասու, ըստ Յովհաննու, Գործք Առաքելոց, Պօղոս առաքեալի տասնըջորս թուղթերը. առ Հռովմայեցիս, առ Կորնթացիս, առ Գաղատացիս, առ Եփեսացիս, առ Փիլիպպեցիս, առ Կողոսացիս, զոյգ առ Թեսաղոնիկեցիս, զոյգ առ Տիմոթէոս, առ Տիտոս, առ Եբրայեցիս եւ եօթը թուղթ միւս առաքեալներէն, այսինքն մէկը Յակովբայ, երկուքը Պետրոսի, երեքը Յովհաննու, եւ մէկը Յուդայի, հոսկ ապա Յայտնութիւն Յովհաննու սրբոյ առաքելոյն:

Յօդուած 5

Միմիայն այս գիրքերը կը նկատենք սուրբ եւ կանոնական՝ սահմանելու, հիմնելու եւ հաստատելու համար մեր հաւատքը եւ ամբողջապէս կը հաւատանք մէջերնին պարունակուած բոլոր բաներուն, ընդ որում ոչ թէ անոր համար որ եկեղեցին կ'ընդունի եւ կը հաստատէ զանոնք այլպէս, այլ որովհետեւ Սուրբ Հոգին կը վկայէ մեր սրտին, որ անոնք Աստուծմէ են, ու նաեւ քանի որ անոնք իրենք գիրենք կը հաստատեն այնպէս, որ նոյնիսկ կոյրերը կրնան ականատես դառնալ մարգարէութիւններու կատարման:

Յօդուած 6

Մենք կը գատորոշենք ընդմէջ սուրբ գիրքերու եւ պարականոն գիրքերու, որոնք հետեւեալն են երրորդ եւ չորրորդ գիրք եգրասայ, գիրք Թովբիայ, Յուդիթի, Իմաստութեան, Ժողովական, Բարուքայ, որ յաւելուած էր եսթերի պատմութեան, երգ երից Մանկանց փուռի մէջ, Շուշանի պատմութիւնը, Բէլ կուռքի եւ Վիշապի, Մանասէի աղօթքը եւ Մակաբէացոց երկու գիրքը, զորս եկեղեցին կրնայ կարդալ եւ անոնցմէ ուսանելի բաները քաղել, որոնք կը համաձայնին կանոնական գիրքերու հետ, առանց ունենալու վերջիններուս ոյժն ու արժէքը՝ դատելու համար քրիստոնեայ հաւատքին կամ կրօնքին մէջ որ եւ է բան, մնաց որ նուազեցնելու սուրբ գիրքերու հեղինակութիւնը:

Յօդուած 7

Կը հաւատանք որ այս Սուրբ Գիրքը կատարելապէս կը պարունակէ աստուածային կամքը եւ լման չափով կը սորվեցնէ ամէն բան, որու մարդը պէտք է հաւատայ փրկութեան համար: Վասն զի պաշտամունքի ամէն ձեւ զոր Աստուած մեզմէ կը պահանջէ մանրամասնօրէն նկարագրուած է մէջը, եւ մարդիկ, Առաքեալներն անգամ կամ երկնից հրեշտակ մը, պէտք չէ սորվեցնեն Սուրբ Գիրքի սորվեցուցածէն տարբեր ձեւով մը, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալը, քանի որ մէկը աւելցնելու չէ որ եւ է բան Սուրբ Գիրքին, ոչ ալ պակսեցնելու է անկէ. ահա աս է ամենէն կատարեալ եւ խոհեմ դաւանութիւնը: Նոյնպէս մարդ բարդատելու չէ աստուածային գիրը մարդոց գրածներու հետ, որչափ ալ սրբութեամբ ալ ապրած ըլլային անոնք, ոչ ալ աւանդութիւնը՝ Աստուծոյ ճշմարտութեան հետ, զի ճշմարտութիւնը ամենէն վեր է, ոչ մեծ թիւը, ոչ վաղեմութիւնը, ոչ իրերաշարդրութիւնը ժամանակներու կամ անձերու, ոչ ժողովները, ոչ հրովարտակ ու կոնդակ, վասն զի ամէն մարդիկ էութեամբ ստախօս են եւ ունայնութենէ իսկ աւելի ունայն են: Ասոր համար է որ ամբողջ սրտով կը մերժենք ամէն բան որ խոտոր կը համեմատի անսխալական այն սկզբանց զորս ուսանք Առաքեալներէն եւ որք կ'ըսեն. փորձեցէք ոգիները, արդեօք Աստուծմէ՛ են, նաեւ. եթէ մէկը կու գայ ու այս ուսմունքը չի բերեր, զինք տուններնիդ մի՛ ընդունիք:

Յօդուած 8

Այս ճշմարտութեան հետեւելով եւ Աստուծոյ խօսքին համաձայն, մենք մէկ Աստուծոյ կը հաւատանք, որ միմիայն մէկ էութեան տէր է որու մէջ երեք անձեր կան յիրաւի եւ ճշմարտապէս՝ յաւիտեանս գատորոշելի, անըմբռնելի՝ իրենց յատկանիչներով, այսինքն՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին: Հայրը սկիզբը, ծագումն ու պատճառն ըլլալով բոլոր բաներուն՝ երեւելի ու աներեւելի: Որդին, որ Բանն է, իմաստութիւնը, առաքիներութիւնն ու պատկերը Հօր: Սուրբ Հոգին առաքիներութիւնն է եւ յաւիտեանական զօրութիւնը՝ Հօրմէ ու Որդիէն բղխող: Սակայն սոյն գատորոշումը չ'ըսեր որ Աստուած բաժնուած ըլլայ երեքի, քանի որ Ս. Գիրքը մեզ կ'ուսուցանէ որ Հայրը, Որդին եւ Ս. Հոգին ունին ամէն մէկն իր յատկանիչներով ուրոյն անձնաւորումը, սակայն

այնպէս որ երեք այս անձերը մէկ Աստուած են: Ակներեւ է, որ Հայրը Որդին չէ, Որնիդ ալ Հայրը չէ եւ Սբ. Հոգին ոչ Հայրն է ու ոչ ալ Որդին: Այնպէս որ զատորոշ երեք այս անձերը ոչ բաժնուած են, ոչ շփոթելի, ոչ ալ ընդհատուած, քանի որ Հայրը երեք մարմին չէ առած, ոչ ալ Սբ. Հոգին, այլ միայն Որդին: Հայրը երեք առանց Որդիին չէ եղած, ոչ ալ առանց իր Սբ. Հոգիին, քանզի այս երեքը հաւասարապէս յաւիտենական են, նոյն էութեան տէր: Ոչ մէկը առաջինն է կամ վերջինը, վասն զի երեքն ալ մէկ են ճշմարտութեամբ, զօրութեամբ, բարութեամբ եւ գլխաւորութեամբ:

Յօդուած 9

Այս բաները կը ճանչնանք թէ՛ Սբ. Գրոց վկայութեամբ, նոյնպէս ալ ներգործութիւններով, զորս մեր ներսիդին կը զգանք: Սբ. Գրոց վկայութիւնները որ մեզի կը սորվեցնեն հաւատալ Սբ. երրորդութեան կը գտնուին բազմաթիւ տեղեր Հին Կտակարանին մէջ, եւ պէտք չունին մէկ առ մէկ յիշուելուն, այլ՝ կը բաւէ մատնանիչ ընել կարեւորագոյնը: Ծննդոց գիրքին մէջ Աստուած կ'ըսէ. Ստեղծենք մարդը մեր հանգոյն, մեր նմանութեամբ, այնպէս Աստուած մարդը իր կերպարանքով ստեղծեց, կ'ըսեմ այր ու կին: Ահա Արամ ստեղծուած է մեզմէ մէկու մը պէս: Այն կը յայտնէ անով, որ Աստուածութիւնը յոգնակի է երեք անձերուն, երբ կ'ըսէ՝ ստեղծենք մարդը մեր հանգոյն, սակայն կը շեշտէ եզակիութիւնը եւս երբ կ'ըսէ. Աստուած ստեղծեց՝ եզակի: Ճշմարիտ է որ Ան չ'ըսեմ, քանի անձեր են, սակայն ինչ որ տակաւին մութ է Հին Կտակարանին մէջ, շատ յստակ կը դառնայ Նորին մէջ: Վասն զի երբ մեր Տէրը Յորդանանի մէջ մկրտուեցաւ, Հօր ձայնը լսուեցաւ որ կ'ըսէր. Այս է Որդին իմ սիրելի: Եւ Որդին ջուրի մէջ կ'երեւի, իսկ Սբ. Հոգին կերեւի աղաւնիի ձեւով: Նոյնը կը վերաբերի հաւատացեալներու մկրտութեան, զոր Գրիստոս սա ձեւով հրահանգած է. գացէք ու մկրտեցէք բոլոր ազգերը Հօր, Որդույ եւ Հոգւոյ Սրբոյ անունով: Ըստ Ղուկասու աւետարանին մէջ կ'ըսուի, որ Գաբրիէլ հրեշտակապետը այսպէս կ'ըսէ Մարիամին, մեր Տէրոջը մօրը. Սբ. Հոգին վրադ պիտի իջնէ եւ Ամենակարողին զօրութիւնը քեզ շուքի պէս պիտի ծածկէ, ասոր համար քեզմէ ծնածը սուրբ պիտի ըլլայ ու Աստուծոյ Որդին պիտի կոչուի: Ուրիշ տեղ մը կ'ըսէ. Տէր Յիսուս Գրիստոսի ողորմութիւնը, Աստուծոյ գլխութիւնը եւ Սբ. Հոգիին հաղորդութիւնը ձեր հետ ըլլան: Երեքն են, որ երկինքի մէջ վկայութիւն կու տան. Հայրը, Բանը եւ Սբ. Հոգին, ու երեքն ալ մէկ են: Այս բոլոր հաստատութիւններէն մենք լիով կ'ուսանինք որ երեք անձերն ալ մի եւ նոյն աստուածայն բնութեան տէր են: Եւ թէեւ այս վարդապետութիւնը մարդկային մեր իմացականութենէն վեր է, մենք հաւատանք Աստուծոյ խօսքին՝ սպասելով լման յայտնութեան եւ վայելումին երկինքի մէջ: Քանզի պէտք է ի մտի ունենալ նաեւ երեք այս անձերուն պաշտօններն ու ներազդեցութիւնները մեր ներսիդին: Հայրը կոչուած է մեր Արարիչը իր զօրութեամբ: Որդին մեր Փրկիչն ու Ազատիչը՝ իր արիւնով: Սուրբ Հոգին մեզ սրբացնողն է իր՝ մեր սիրտերուն մէջ բնակելով: Սուրբ երրորդութեան այս վարդապետութիւնը միշտ ալ դաւանուել է ճշմարիտ եկեղեցիէն՝ առաքեալներու օրերէն ցայսօր, ի հեծուկս Հրեաներու, Մահմէտականներու եւ կեղծ քրիստոնեաներու եւ հերձուածողներու ինչպէս Մարկիանոս, Մանէս, Պրաքսաս, Սաբելիոս, Սամոսատցի Պօղոս, Արիոս եւ նմաններու, որոնց իրաւունքով դատապարտուել են սուրբ հայրերուն բերնով: Մենք նոյնպէս կամաւ կ'ընդունինք այս նիւթին վրայ երեք հաւատամքները. առաքեալներունը, Նիկիոյ հանգանակը եւ Աթանասինը եւ անոնք, որ այս երեքին կը համեմատին:

Յօդուած 10

Կը հաւատանք որ Յիսուս Գրիստոսը, գալով աստուածային իր բնութեան, Աստուծոյ միածին որդին է, յաւիտենութենէ ի վեր ծնած, ըլլալով ոչ ստեղծուած ոչ արարուած (այլապէս արարած մը պիտի ըլլար) Հօր էակից, յաւիտենակից, Հօր անձին դրոշմը կրող, իր փառքին փառակից, ըլլալով ամէն բանով իրեն նմանող, որ

Աստուծոյ Որդին է ոչ թէ մեր բնութիւնը վրան առած պահէն ի վեր, այլ յաւիտենութենէն ի վեր, ինչպէս բոլոր այս վկայութիւնները մեզ կ'ուսուցանեն, իրարու միջեւ համաձայնելով: Մովսէս կ'ըսէ որ Աստուած ստեղծեց տիեզերքը, Յովհաննէս աւետարանիչ կ'ըսէ որ ամէն բաները Բանով՝ Աստուծոյ խօսքով ստեղծուած են, գոր ինք Աստուած կ'անուանէ: Առաքեալը կ'ըսէ որ Աստուած դարեր ստեղծած է իր Որդիով: Պօղոս առաքեալը նաեւ կ'ըսէ որ Աստուած ամէն բան Յիսուս Քրիստոսով ստեղծած է: Ուստի պէտք է որ Ան, որ Աստուած, Բան, Որդի եւ Յիսուս Քրիստոս կը կոչուի գոյութիւն ունեցած ըլլայ ամէնէն առաջ, քանի որ ամէն բան իր ձեռքով ստեղծուած է: Ասոր համար է որ Միքիա մարգարէն կ'ըսէ. Իր սկիզբը յաւիտենութեան օրերէն ի վեր է: Եւ առաքեալն ալ. Իր օրերն անսկիզբ են եւ անվերջ: Ան ճշմարտապէս յաւիտենական Աստուած է, Ամենակարողը, գոր կը կանչենք, կը պաշտենք եւ որուն կը ծառայենք:

Յօդուած 11

Կը հաւատանք եւ կը դաւանինք նաեւ որ Սուրբ Հոգին կը բխի յաւիտենապէս Հօրմէ եւ Որդիէն՝ ըլլալով ոչ ստեղծուած ոչ ալ արարուած, ոչ ալ ծնած, սակայն միմիայն երկուքէն ալ բխող, ըլլալով երրորդութեան երրորդ անձը կարգով, Հօր եւ Որդիին էակից, մեծութեան եւ փառքին մասնակից, ըլլալով ճշմարիտ եւ յաւիտենական Աստուած, ինչպէս մեզ կ'ուսուցանէ Սուրբ Գիրքը:

Յօդուած 12

Կը հաւատանք որ Հայրը ոչինչէն ստեղծած է երկինքն ու երկիրը իր հաճութեան համեմատ՝ հաղորդելով իւրաքանչիւր արարածին էութիւնը, ձեւն ու կերպարանքը եւ տարբեր պաշտօններ՝ իրենց Արարիչին ծառայելու համար, կը հաւատանք որ Ան կ'ապրեցնէ զանոնք ու կ'իշխէ վրանին Աստուածային իր նախախնամութեամբ եւ յաւիտենականութեամբ՝ մարդուն ծառայելու համար, որպէս զի մարդը Աստուծոյ ծառայէ: Ան նոյնպէս ստեղծած է հրեշտակները՝ իր բարի սուրհանդակներն ըլլալու կոչուած՝ ծառայելու համար ընտրեալներուն: Հրեշտակներէն ոմանք՝ հրաժարելով կատարելութենէն, որմով Աստուած զիրենք օժտած է՝ նետուած են յաւիտենական կորուստի մէջ, միւսները յամառած են մնալ առաջուան իրենց վիճակով՝ Աստուծոյ ողորմութեամբ: Սատանան եւ չար ոգիները այդչափ եղծուած են, որ Աստուծոյ թշնամի են եւ աւազակներու պէս դարանամուտ կը հսկեն ինչպէս Եկեղեցիին, նոյնպէս ալ իւրաքանչիւր հաւատացեալին վրայ՝ զիրենք կորսնցնելու եւ զիրենք իրենց ստատեղծով մոլորեցնելու համար, ասոր համար է, որ իրենց իսկ չարութեամբ իրենք դատապարտուած են յաւիտենական կորստեան՝ օր օրին սպասելով չարչարանքին: Ասոր վրայ մենք կ'ատենք Սաղոմոնիներու սուտ վարդապետութիւնը որ կը ժխտէ ոգիներու եւ հրեշտակներու գոյութիւնը, ինչպէս նաեւ Մանիքեաններու մոլորութիւնը, որոնք կ'ըսեն որ դեւերը իրենք զիրենք ստեղծած են՝ չար ըլլալով իրենց բուն էութեամբ ու ոչ թէ անկումի հետեւանքով:

Յօդուած 13

Կը հաւատանք, որ բարին Աստուած, բոլոր բաներն ստեղծելէ ետք՝ զանոնք չէ լքած դիպուածին կամ ճակատագրին, սակայն կը կառավարէ եւ կ'առաջնորդէ այնպիսի ձեւով մը, իր սուրբ կամքին համաձայն, որ ոչինչ կրնայ պատահիլ առանց իր հրամանին այս աշխարհիս մէջ: Այնուամենայնիւ Աստուած ոչ հեղինակ է, ոչ ալ պատասխանատուն չարիքին, որ կը կատարուի, վասն զի իր գորութիւնը եւ բարութիւնը այդչափ մեծ են եւ անըմբռնելի, որ ինք կը կարգադրէ եւ լաւ եւ արդարութեամբ կը կատարէ իր գործը, սակայն Սատանան եւ չարերը կը գործեն անիրաւութեամբ: Ասիկա մարդու ըմբռնումէն վեր է, ուստի չենք փափաքիր միջամուկս

ըլլալ աւելին գիտնալու մեր մղումով, սակայն ամենայն խոնարհութեամբ եւ երկիւղով կը պաշտենք Աստուծոյ արդար դատաստանները, որոնք մեզմէ ծածկուած են՝ գոհանալով Քրիստոսի աշակերտներն ըլլալով՝ սորվելու համար միայն զայն, որ իր խօսքը մեզի կ'ուսուցանէ եւ բնաւ ոտնձգութիւն չկատարելով անկէ դուրս: Այս վարդապետութիւն մեզին աննկարագրելի մխիթարութիւն մը կը բերէ, վասն զի ան մեզի կը սորվեցնէ, որ ոչինչ կրնայ դիպուածաւ պատահիլ մեզի, այլ՝ միմիայն մեր բարի երկնաւոր Հօր կամքով, որ կը հսկէ վրանիս հայրական հոգածութեամբ՝ իրեն հպատակեցնելով իր արարածները, որով մեր գլխէն մազ մը իսկ – վասն զի ամէնը համրուած են – ոչ ալ պզտիկ թռչուն մը կրնայ գետինն իյնալ առանց մեր Հօր կամքին: Ասով կը մխիթարութիւն գիտնալով որ Ան դեւերը սանձած կը պահէ եւ բոլոր թշնամիները, որոնք մեզի բնաւ չեն կրնար վնասել առանց իր հրամանին եւ բարի կամքին: Ասոր վրայ կը մերժենք եպիկուրեաններու մոլորութիւնը, որոնք կը պնդեն որ Աստուած բանի մը միջամուկ չ'ըլլար, այլ ամէն բան ըստ բախտի կատարուիլ կը թողու:

Յօդուած 14

Կը հաւատանք որ Աստուած ստեղծեց մարդը հողի փոշիէն՝ զայն կերտելով եւ ձեւելով իր պատկերին համեմատ՝ բարի, արդար եւ յօժար իր կամքին, եւ մարդը այդ պատիւին արժանացած ատենը ոչինչ գիտեր ատոր մասին ու չէր ճանչնար իր այդ գերադասութիւնը, սակայն իր կամքով ալ մեղքի՝ ծառայ դարձաւ եւ հետեւաբար նզովքի եւ մահուան՝ ականջ կախելով սատանայի խօսքին: Վասն զի խախտեց Աստուծոյ պատուիրանը եւ իր մեղքով բաժնուելով Արարիչէն, որ իր կեանքն էր, աղարտելով ամբողջ բնութիւնը, դառնալով մեղաւոր եւ արժանի ու ենթակայ՝ հոգեւոր եւ մարմնաւոր մահուան, դառնալով չար, անառակ, եղծուած բոլոր իր ճամբաներուն վրայ, կորսնցնելով Աստուծմէ ստացուած գերազանց պարգեւները, որոնցմէ իրեն միմիայն աննշան հետքերը կը մնան, որոնք բաւական են սակայն որ մարդը ներումի անարժան ըլլայ: Նոյնպէս եւ ամէն բան որ լոյս էր մեր մէջ՝ խաւարի փոխուած է, ինչպէս Ս.Գիրքը մեզ կ'ուսուցանէ ըսելով. Լոյսը կը փայլի խաւարի մէջ, սակայն խաւարը զայն չէ ճանչցած. հոս Յովհաննէս առաքեալը մարդը խաւար կը կոչէ: Այս պատճառաւ ալ մենք կը մերժենք ամէն վարդապետութիւն, որ ազատ կամքը կը վերագրէ մարդ արարածին, որ ընդամէնը մեղքի ծառայ մըն է, բանի մը անկարող, եթէ իրեն երկինքէն սորուած չ'ըլլար, եւ ո՞վ կրնայ պարծիլ իր կարողութեամբ բարի բան մը կատարել, զի Քրիստոս կ'ըսէ. Մէկը ինծի չի գար եթէ Հայրս որ զիս ուղարկեց, չքաչէ զինք: Ո՞վ կրնայ սանձել իր կամքը նկատի ունենալով որ մարմինի փափաքը թշնամութիւն է Աստուծոյ դէմ: Ո՞վ կրնայ խօսիլ իր գիտակցութենէն տեսնելով որ շնչաւոր մարդը չի հասկնար Աստուծոյ Հոգիէն եղած բաները: Կարճ ըսենք. որո՞ւ միտքէն կ'անցնի: Քանի որ մենք անկարող ենք խորհիլ որ եւ է բան մեր ոյժով, սակայն մեր այդ կարողութիւնը Աստուծմէ կու գայ: Ասոր համար է որ Առաքեալը իրաւունք ունի, համոզուած են հաստատուն մնալու, որ Աստուած մեր մէջ փափաքը եւ մղումը յառաջ բերէ՝ իր բարեհաճութեան համեմատ: Վասն զի Աստուծոյ հնազանդ ըլլալու ոչ մղումը կայ, ոչ կամքը մարդու մէջ, եթէ Քրիստոս գործած չ'ըլլար իր ներսիդին, ինչպէս ինքն ալ կը սորվեցնէ. Առանց ինծի ոչինչ կրնաք ընել:

Յօդուած 15

Կը հաւատանք, որ Ադամի անհնազանդութեամբ նախնական մեղքը տարածուել է մարդու ամբողջ ցեղին վրայ, եւ այդ մեղքը ամբողջ էութեան եղծումն է եւ ժառանգաբար շարունակուող, որ կ'արատաւորէ նոյնիսկ տակաւին չծնած մանուկները մօրը որովայնին մէջ, որ մարդու մէջ ամէն տեսակ մեղք կը գործէ՝ վերջինիս արմատն ըլլալով, որ անչափ չար է Աստուծոյ առջեւ եւ բաւական՝ մարդու ցեղը դատապարտելու, չի վերնար նոյնիսկ մկրտութեան միջոցաւ եւ արմատախիլ չ'ըլլար, քանի որ պղպղակները կ'ելլեն կարծես միեւնոյն չար աղբիւրէն: Որմէ կտրուած չ'ըլլալով մէկ ընդ միշտ Աստուծոյ զաւակներէն սակայն ներուած են Աստուծոյ

գլխավորումը եւ ողորմութեամբ, սակայն ոչ թէ անոր համար որ իրենք մեղքին մէջ ննջեն, այլ անոր համար որ այս եղծումի զգացումը հառաչ մը յառաջ բերէ արդարներու սիրտէն որպէս զի փափաքին ազատիլ մահականացու այս մարմինէն: Ասոր վրայ կը մերժենք Պեղագեաններու մոլորութիւնը որոնք կ'ըսեն որ մեղքը կապկումէն տարբեր բան մը չէ:

Յօդուած 16

Կը հաւատանք որ Ադամի ամբողջ ցեղը այդ ձեւով դէպքը կորուստ գլորելով եւ առաջին մարդու մեղքով քարուքանդ եղած՝ Աստուած շարունակաբար կը յայտնէր ինքզինք ինչպէս որ է. գլխասիրտ եւ արդար: Գլխաւոր եւ իրեն քաջող եւ փրկող զանոնք, զորս յաւիտենական եւ անյեղի իր խորհուրդով ընտրած է եւ կոչած զուտ իր բարութեամբ՝ Յիսուս Քրիստոսով մեր Տէրոջմով՝ բոլորովին անկախ իրենց գործերէն: Եւ արդար՝ թողլով միւսները իրենց աւերակներուն վրայ՝ դիմելու առ խարխափ հոն, ուր իրենց երթալիք տեղն է:

Յօդուած 17

Կը հաւատանք որ մեր բարին Աստուած հիանալի իր իմաստութեամբ եւ բարութեամբ տեսնելով որ մարդը իր կամքով դէպի մահը կը փութայ՝ ինչպէս մարմնով, նոյնպէս ալ հոգիով եւ բոլորովին տարաբախտ՝ ինքն է որ սկսեք է փնտռել, մինչդեռ մարդը դողալով իրմէ կը փախչէր, եւ մխիթարել զանիկա, խոստանալով ուղարկել կնոջմէ ծնած իր Որդին՝ օձին գլուխը ջախջախելու եւ մարդոց երանութիւններ չնորհելու:

Յօդուած 18

Կը դաւանինք որ Աստուած կատարած է սուրբ իր մարգարէներու բերնով նախահայրերուն տուած իր խոստումը՝ ուղարկելով իր միածին յաւիտենական Որդին աշխարհի մէջ իր սահմանած ատեններին՝ ծառայի կերպարանքով եւ մարդոց նմանութեամբ կերտուած՝ ճշմարտապէս առնելով մարդու բնութիւնը՝ բոլոր տկարութիւններով հանդերձ, սակայն առանց մեղքի: Յղացած ըլլալով երանելի Մարիամ կոյիսի որովայնին մէջ Ս. Հոգիին զօրութեամբ առանց մարդու միջամտութեան, ան առաւ ոչ միայն մարդու բնութիւնն ըստ մարմնոյ, այլեւ մարդու ճշմարիտ հոգին՝ կատարելապէս մարդ դառնալու համար, վասն զի հոգին նոյնպէս կորսուած էր մարմինի պէս, ուրեմն երկուքն ալ առած էր՝ երկուքն ալ մէկտեղ փրկելու համար: Ահա թէ ինչու կը մերժենք կրկնամկրտչականներու մոլորութիւնը, որոնք կ'ուրանան որ Քրիստոս մարմին առած է մօր կողմանէ, այլ կը հաւատանք որ Քրիստոս նոյն մարմինն ու արիւնն ունէր ինչ որ երախաները, որ ինք Դաւիթի երանքէն է մարմինի կողմամէ՝ Դաւիթի սերմէն, կոյս Մարիամի որովայնին պտուղն է՝ ծնած Դաւիթի տոհմէն, կնոջմէ, ծիլ մը Յեսսէի արմատէն, ելած Յուդայէն, սերած Հրեաներէն՝ դարձեալ մարմինի կողմանէ, Աբրահամու սերմէն, քանի որ Աբրահամու տոհմէն է, կերտուած՝ իր եղբայրներու նմանութեամբ բացի մեղքէն, այնպէս որ ինքն է մեր ճշմարիտ էմանուէլը, այսինքն՝ Աստուած մեր հետ:

Յօդուած 19

Կը հաւատանք որ այս յղացումամբ Որդիին անձը միացած եւ անբաժանելիօրէն միակցած է մարդկային բնութեան այնպէս որ չկայ երկու Աստուծոյ որդի, ոչ ալ երկու զատ անձեր, այլ երկու բնութիւն՝ միացած մէկ անձին մէջ՝ ընդ որում զոյգ բնութիւնները կը պահեն ամէն բանի մէջ իրենց ուրոյն յատկութիւնները: Այնպէս որ աստուածային բնութիւնը միշտ ալ անստեղծ մնացած է, անսկիզբ եւ անվերջ՝ իր լիութեամբ երկինքն ու

երկիրը լեցնող, մինչ մարդկային իր բնութիւնն ալ յատկութիւնները պահած է՝ մնալով արարած որ իր սկիզբն ունի՝ կատարելապէս մարդկային ամէն բանի տէր: Առաաւել. իր յարութիւնն առնելով ան մարմինին տուած է անմահութիւնը, սակայն ինք չէ փոխուած մարդկային իր բնութեան ճշմարիտ ըլլալէն եւ մարդկօրէն մարմնաւոր ըլլալէն՝ որոնցմէ կախում ունին մեր փրկութիւնն ու յարութիւնը: Սակայն զոյգ այս բնութիւնները այդչափ սերտօրէն միաւորուած են մէկ անձին մէջ, որ իրարմէ չեն զատուած իր մահուամբ անգամ: Մահուան պահուն՝ Աստուծոյն իր աւանդածը մարդկային հոգին էր, սակայն աստուածային բնութիւնը չէ լքած իր մարմինը գերեզմանին մէջ անգամ՝ ընդմիջտ միացած մնալով մարդկայինին, ճիշդ ինչպէս ներսիդին բնակած էր, երբ Ան մանուկ էր, երբ իր աստուածութիւնը տակաւին չէր յայտնուած: Ասոր համար է որ զինք կը դաւանինք ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ, ճշմարիտ Աստուած՝ իր զօրութեամբ մահը յաղթող եւ ճշմարիտ մարդ՝ մեռնելու համար մեր սիրոյն՝ մահկանացու մարմինին տկարութեամբ:

Յօդուած 20

Կը հաւատանք որ Աստուած կատարելապէս գլխաւոր ըլլալով եւ այնուհանդերձ ամենէն արդար՝ ուղարկեց իր Որդին առնելու այն բնութիւն, որու մէջ անհնազանդութիւն կատարուած էր՝ այդ բնութեան մէջ կրելու մեղքին պատիժը դժնէ մահով եւ չարչարանքով, այնպէս որ Աստուած իր Որդիով վերցուցած է մեր մեղքերը, իսկ մեր վրայ տարածած իր բարութիւն եւ գութը, մեր վրայ, որ արժանի էին պատիժի եւ անէծքի՝ իր որդին մահուան ուղարկելով՝ իր կատարեալ սիրով եւ մեզ մեռելներէն յարուցանելով արդարացման համար, որպէս զի իրմով անմահութիւնն ու յաւիտենական կեանքն ունենանք:

Յօդուած 21

Կը հաւատանք, որ Յիսուս Քրիստոս մեծ քահանայապետն է երբեմով՝ Մեղքիսեղեկի կարգին պէս, որ Հօր առջեւ կը կենայ իր բարկութիւնը խաղաղեցնելու համար, լման բաւարարութեամբ, ինքզինք ղենելով խաչի զոհասեղանին վրայ, տալով թանկարժէք իր արիւնը մեր մեղքերը լուալու համար՝ մարգարէներու յայտնածին պէս: Գանի որ գրուած է, որ մեզի հաշտեցնող խաղաղութիւն բերող պատիժը դրուած էր Աստուծոյ Որդին վրայ եւ որ մենք իր վերքերով բուժուած ենք, որ ինք մահուան տարուեր է գառի մը պէս, որ մեղաւորներուն կարգը դասուած էր, դատապարտուած՝ չարագործի մը պէս Պոնտացի Պիղատոսին առջեւ, որ զինք այնուամենայնիւ անմեղ կը յայտարարէր: Ուրեմն Ան վճարեց զայն, ինչ չէր պարտէր, չարչարուեցաւ՝ արդարը անարդարներու համար՝ թէ՛ մարմնով, թէ՛ հոգիով այնպէս որ զգալով մեր մեղքերուն համար հասանելիք սոսկալի պատիժը՝ իր ճակտին քրիտինքը արիւնը կաթիլներու պէս գետինը կը գլորէր: Աս աղաղակեց՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողուցիր զիս, եւ այս ամէնը տարաւ մեր մեղքերու քաւութեան համար: Ասոր համար է որ յիւրաւի կ'ըսեն Պօղոս առաքեալին հետ, որ Յիսուս Քրիստոս, ընդ որում խաչեալ Յիսուսէն զատ ուրիշ բան մը չենք ճանչնար, այլ բոլոր բաները ոչինչի պէս սեպելով՝ բաղդատած մեր Տէր Յիսուս Քրիստոսը ճանչնալուն հետ, մենք միտիթարանք էր գնտենք իր Վերքերուն մէջ, եւ պէտք չունինք փնտռելու այլ միջոց մը մեզ Աստուծոյ հետ հաշտեցնելու: Միակ զոհաբերութիւնը մէկընդմիջտ կատարուած՝ որ հաւատացեալներս կատարեալ կը կացուցանէ յաւիտենապէս, այս է նաեւ պատճառը որ Աստուծոյ հրեշտակը իրեն Յիսուս անունը տուած էր, այսինքն՝ Փրկիչ, որ պիտի փրկէր իր ժողովուրդը մեղքերէն:

Յօդուած 22

Կը հաւատանք որ այս մեծ խորհուրդը իրապէս գիտակցելու համար, Սբ. Հոգին մեր սիրտորու մէջ կը վառէ ճշմարիտ սէր մը, որ ամբողջովին կը փարի Յիսուս Քրիստոսին իր բոլոր արժանիքներով եւ զինք ամբողջովին կ'իւրացնէ՝ իրմէ դուրս ուրիշ որ եւ է բան չփնտռելով: Քանի որ անհրաժեշտ է փրկութեան համար, ըսել թէ Քրիստոս չի բաւեր, որ ուրիշ բանը մը անհրաժեշտ է հայհոյութիւն մըն է Աստուծոյ դէմ, քանի որ հետեւաբար Յիսուս Քրիստոս կէս Փրկիչ մը կ'ըլլայ ատով: Ասոր համար է եւ իրաւացիօրէն Պօղոս առաքեալի հետ կ'ըսենք որ մենք միմիային հաւատքով արդարացուած ենք, այլ բանիւ՝ հաւատքով առանց գործերու: Հետեւաբար չենք ակնկալեր շիտակն ըսենք, որ հաւատքը մեզ արդարացնէ, վասն զի հաւատքը միմիայն գործիք մըն է որմով կը փարինք Յիսուս Քրիստոսին, որ մեր արդարութիւնն է, եւ Յիսուս Քրիստոս մեզի հաղորդելով իր վաստակները եւ իր բարի գործերը որ մեզի համար եւ մեր անունով գործած է: Ինքն է մեր արդարութիւնը, եւ հաւատք այն գործին է որ մեզ իրեն հաղորդակից կը պահէ եւ իր բարիքներու հետ, որոնք մերինները դառնալով՝ աւելի քան բաւական են մեր մեղքերէն ազատելու համար մեզ:

Յօդուած 23

Կը հաւատանք որ մեր փրկութիւնը կը բխի մեր մեղքերու քաւութեան վրայ՝ Յիսուս Քրիստոսին շնորհիւ, եւ ասոր մէջ ալ պարունակուած է Աստուծոյ առջեւ մեր արդարութիւնը ինքչպէ՛ Դաւիթ եւ Պօղոս առաքեալը մեզ կ'ուսուցանեն՝ հռչակելով երանութիւն մարդուն, որու Աստուած արդարութիւն կը սեպէ: Եւ նոյն առաքեալը որ կ'ըսէ եր մենք ճիշտաբար արդարացուած ենք կամ շնորհքով քաւուած, որ Յիսուս Քրիստոսի մէջ է: Ասոր համար է որ մենք հաստատուն կը կենանք անյեղլի այն հիման վրայ՝ ամբողջ փառքը տալով Աստուծոյ, խոնարհեցնելով մեզ եւ ինքզինքնիս ճանչնալով ինչպիսին որ ենք, առանց որ եւ է բանի յաւակնելու եւ մեր վաստակը շեշտելու, մենք կը յենունք եւ ինքզինքնիս կը հաստատենք խաչեալ Քրիստոսի հաւատարմութեան մէջ, որ մերինն է, երբ իրեն հաւատանք: Ան բաւական է ծածկելու մեր բոլոր յանցանքները, մեզի վստահութիւն շնորհելու՝ մեր գիտակցութենէն հեռացնելով վախը, սարսափը եւ երկիւղը՝ մօտենալու Աստուծոյ ոչ թէ Արամի պէս որ դողալէն կը փափաքէր թզենիի տերեւներով ծածկուիլ: Եւ եթէ ստիպուած ըլլայինք Աստուծոյ առաջ երեւիլ յենելով միմիայն մեր վրայ կամ ուրիշ արարծի մը վրայ, աւա՛ղ, մենք կորսուած պիտի ըլլայինք: Ասոր համար է որ ամէն մէկը պէտք է Դաւիթի հետ ըսէ. Ո՛վ Տէր, քու ծառաներուդ հետ դատաստանի մի մտներ, զի Բու առջեւդ ոչ մէկ կենդանի մար կընայ արդարանալ:

Յօդուած 24

Կը հաւատանք որ ճշմարիտ այս հաւատքը ծագած ըլլալով մարդու մէջ մտիկ ընելով Աստուծոյ խօսքին ու Սբ. Հոգիին ներգործութեամբ կը վերածնէ զինք՝ դարձնելով նոր մարդ մը, իրեն նոր կեանք մը ապրիլ կու տայ, ազատելով մեղքի ծառայի վիճակէն: Կը բաւէ սակայն որ արդարացնող այդ հաւատքը պաղի մարդու մէջ, եւ բարի եւ սուրբ կեանքով ապրելու փափաքը շիջի, որ մարդիկ առանց այդ հաւատքին Աստուծոյ սիրոյն համար որ եւ է բան չընեն, այլ միմիայն իրենց համար եւ դատապարտութեան վախէն: Ուստի անհնար է որ այդ հաւատքը անցողիկ մարդու մէջ, մանաւանդ որ ունայն հաւատքի մը մասին չէ որ կը խօսինք, այլ այն հաւատքին մասին, գոր Սբ. Գիորքը կենդանի եւ գործօն կը կոչէ՝ սէրէն մղուած հաւատքը որ մարդս կը քաջալերէ Աստուծոյ գործերը կատարել, գորս Ան կը հրահանգէ իր խօսքին մէջ: Այդ գործերը կը բռնանին հաւատքին բարի արմատէն, բարի են եւ ընդունելի Աստուծոյ առջեւ՝ սրբացուած ըլլալով Աստուծոյ ողորմութեամբ: Ուստի այդ գործերը ի հաշուի չեն առնուիլ մեզ արդարացնելու համար, զի հաւատքով է միմիայն որ մենք կ'արդարանանք՝ բարի գործերը կատարելէ իսկ առաջ, այլապէս այդ գործերը պիտի

չկարենալին բարի ըլլալ ինչպէս բարի չէ պտուղ մը որ ծառէ մը կու գայ, որ բարի չէ: Մենք բարի գործերը կը կատարենք, սակայն ոչ թէ արժանանալու համար – իսկ ի՞նչ բանի կրնանք արժանանալ – քակայն հաշուետու ենք Աստուծոյ մեր կատարած բարի գործերու համար, վասն զի Ան է, որ մեր ներսիդին կ'արծարծէ փափաքը եւ գործելու մղումը՝ իր հաճութեան համեմատ, որու համար կ'ըսուի. երբ այս ամէնը կատարած ըլլանք ինչ որ ձեզի հրահանգուած է, ըսէք. «Անպիտան ծառաներ ենք, զոր պարտ էինք ընել՝ ըրինք»: Չենք ուզեր սակայն ժխտել որ Աստուած բարի գործերը կը վարձատրէ, սակայն իր ողորմութեամբ է որ կը պսակէ իր ընծաները: Այլապէս ինչ ալ ընելու ըլլանք՝ մեր փրկութիւնը մեր գործերուն վրայ չենք հիմներ, զի ոչ մէկ գործ կատարելու ատակ ենք որ մեր մարմինէն ապականած չըլլայ՝ նոյնպէս պատիժի արժանի ըլլալով, եւ եթէ այդ գործերէն մին ցուցնենք՝ որ եւ է մեղքի յիշատակը կը բաւէ որ բարի այդ գործը Աստուծոյ երեսէն մերժուի, այդ ձեւով միշտ ալ կասկածի մէջ պիտի մնանք եւ ասդին անդին տատանինք առանց վստահութեան, եւ խեղճ մեր խղճմտանքը մշտապէս պիտի չարչարուի, եթէ հիմնուած չըլլայ մեր Տէրոջ մահուան եւ չարչարանքի վաստակին վրայ:

Յօդուած 25

Կը հաւատանք որ Օրէնքի ծէսերն ու արտաքին ձեւերը դադրած են Գրիստոսին գալով, եւ բոլոր շուքերը՝ վերջ գտած, այնպէս որ անոնց կիրարկումը պէտք է վերցուի քրիստոնեաներուն մէջ: Սակայն անոնց ճշմարտութիւնն ու էութիւնը կը գոյատեւեն բնակելով Յիսուս Գրիստոսի մէջ, որ լրումն ու կատարումն է այդ բաներուն: Սակայն մենք կը գործածենք Օրէնքէն եւ մարգարէներէն առնուած վկայութիւնները մեզ Աւետարանի մէջ հաստատելու համար, ինչպէս նաեւ կարգի դնելու համար մեր կեանքն ամեն ազատութեամբ՝ Աստուծոյ փառքին համար եւ իր կամքին համաձայն:

Յօդուած 26

Կը հաւատանք որ Աստուծոյ չենք կրնար մօտենալ եթէ ոչ Գրիստոսի միջոցաւ որ միակ Միջնորդն ու փաստաբանն է, որ ճիշդ այդ նպատակով մարդ դարձած է՝ միացնելով մարդկային բնութիւնը աստուածայինին հետ, որպէս զի մենք, մարդերս կարենանք մուտք գործել առ աստուածային մեծութիւնը, վասն զի այլ կերպ չենք կրնար մտնել: Սակայն Հայրը իրեն հետ հաղորդակցելու համար տուած է Միջնորդը, որ պէտք չէ այլեւս սարսուցնէ մեզ իր մեծութեամբ՝ որ մենք մեր երեւակայութենէն տարուած ուրիշ միջնորդ մը փնտռենք. Ոչ մէկ անձ երկինքի մէջ եւ երկրի վրայ եղած արարածներէն մեզ չի սիրեր Յիսուս Գրիստոսին չափ, որ էութեամբ Աստուած՝ Ինքզինք խոնարհած է՝ առնելով մարդու եւ ծառայի կերպարանքը, զինք դարձնելով իր եղբայրներուն նմանող: Եւ եթէ պէտք ըլլար գտնել ուրիշ Միջնորդ մը մեզ սիրող, զով պիտի կարենայինք գտնել, որ մեզ սիրէր աւելի քան Ան, որ իր կեանքը դրաւ մեզի համար երբ տակաւին թշնամի էինք իրեն: Կրնա՞նք գտնել ճշմարտութեամբ եւ զօրութեամբ Անոր հաւասար մէկը, որ Հօր աջ կողմը նստած է, որ ամբողջ իշխանութիւնն ունի երկինքի մէջ եւ երկրի վրայ: Եւ որո՞ւ աղօթքը աւելի լսելի է քան Աստուծոյ սիրելի Որդիինը: Այս ճշմարտութենէն շեղելով է որ ծնունդ առած է սովորութիւն մը, որ կ'անպատուէ սուրբերը՝ զիրենք պատուելու փոխարէն ընելով բան մը զոր իրենք ոչ ըրած են, ոչ ալ մեզի ընել պատուիրած, այլեւ մշտապէս մերժած են՝ ատիկա պարտքերնին սեպելով, ինչպէս իրենց գրութիւնները կը վկայեն: Եւ կարեւորը հոս ոչ թէ մեր՝ անարժան ըլլալու փաստը, քանի որ խնդիրը մեր աղօթքներուն արժանի ըլլալը կամ չըլլալը չէ, սակայն Գրիստոսի ամենէն վեր եւ ամենէն արժանի ըլլալն է, որուն արդարութիւնը մեզի կը վերագրուի հաւատաքով: Ահա ինչու առաքեալը լիիրաւ կը փափաքի մեզ ազատել այդ վախէն, ըսելով որ Յիսուս Գրիստոս ինքզինք իր եղբայրներուն նմանող ըրաւ՝ դառնալու համար ինքնակալ քահանայ, գլխաւատ եւ հաւատարիմ՝

մաքրելու համար ժողովուրդին մեղքը, քանի որ ինք չարչարուելով փորձութեան ենթարկուած է եւ կարող՝ փրկելու զանոնք, որոնք նոյնպէս փորձութեան կ'ենթարկուին: Այնուհետեւ այլ մեզ քաջալերելով իրեն մօտենալու կ'ըսէ. Մենք ինքնակալ Գահանայ մը ունենալով, Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին, որ երկինք ելած է. զի՛նք կը դաւանինք վասն զի չունինք ուրիշ քահանայ մը, որ գութ ունենար մեր սկարութեանց վրայ, փորձուած ըլլալով ամէն բանով բացի մեղքէն, ուստի վստահութեամբ մօտենանք ողորմութեան Աթոռին՝ ստանալու համար գութն ու շնորհը՝ մեզ զօրացնող: Նոյն առաքեալը կ'ըսէ որ ազատութիւնն ունինք մտնել սրբութիւն սրբոցը Յիսուս Քրիստոսի արիւնով. քալենք ուստի, կ'ըսէ ան, հաւատքի հաստատութեամբ եւն: Նաեւ. Քրիստոսն է իբրեւ մշտակայ քահանան՝ կարող է կատարելապէս փրկել զանոնք, որոնք իրմով Աստուծոյ կը մօտենան, միշտ կենդանի՝ իրենց համար միջնորդելու համար: Ասկէ աւելի ի՞նչ բանի պէտք ունինք, վասն զի Քրիստոս ի՛նք կ'ըսէ. ես եմ՝ ճամբան, ճամբարտութիւնն ու կեանքը, մէ՛կը իմ Հօրս չի գար եթէ ոչ ինձմով: Ի՞նչ բանի համար ուրիշ փաստաբան մը փնտոենք. Աստուած հաճեցաւ իր Որդին տալ մեզի իբրեւ փաստաբան: Զինք չլքենք դիմելու համար մէկ ուրիշի կամ աւաւել ճշգրիտ՝ փնտոենք առանց գտնել կարենալու, քանի որ Աստուած երբ զԱն մեզի կու տար՝ քաջ գիտէր որ մեղաւոր էինք: Ահա՛ ինչու, Քրիստոսի պատուէրին հետեւելով մենք կը կոչենք երկնաւոր Հայրը՝ Քրիստոսով՝ միակ մեր միջնորդով, ինչ որ մենք ուսած ենք սէրունական աղօթքին մէջ՝ վստահ ըլլալով, որ ամէն բան որ Հօրմէ խնդրենք իր անունով՝ պիտի ստանանք ալ:

Յօդուած 27

Կը հաւատանք եւ կը դաւանինք միմիայն մէկ ընդհանրական եկեղեցին որ ճամարիտ ժողովքն է՝ Յիսուս Քրիստոսով իրենց փրկութեան լրումին սպասող՝ Անոր արիւնով լուացուած եւ սրբացած եւ Աբ.Հոգիով կնքուած: Այդ եկեղեցին աշխարհի սկիզբէն էր եւ մինչեւ վերջը, քանի որ Քրիստոս երկնաւոր թագաւոր է եւ պէտք է որ հպատակներ ունենայ: Եւ այդ սուրբ եկեղեցին Աստուած կը պահէ ամբողջ աշխարհի ատելութեան դէմ, թէեւ որոշ ժամանակ ան փոքրաթիւ պիտի երեւի մարդոց աչքին եւ կարծես թէ չիջած, ճիշդ ինչպէս Աքաբ թագաւորի դժնէ օրերուն Տէրը իրեն պահած է եթէր հազար մարդ որ Բահաղի առջեւ ծունր չեն կրկնած: Նոյնպէս այդ սուրբ եկեղեցին չի գտնուիր որոշակի տեղ մը եւ որոշ անձերու քով, այլ տարածուած եւ սփռուած է ամբողջ աշխարհիս վրայ՝ միեւնոյն ատեն միացած ըլլալով սրտով եւ կամքով եւ նոյն հոգիով՝ հաւատքին շնորհիւ:

Յօդուած 28

Կը հաւատանք որ սուրբ այդ ժողովքը փրկուածներու ժողովք է, եւ անկէ դուրս բնաւ փրկութիւն չկայ, եւ ոչ մէկը կրնայ ինզինք առանձնացնել՝ իր անձին վրայ ամփոփուելով, սակայն ամէնքը պէտք է մէկտեղուին եւ միանան՝ պահպանելով եկեղեցիին միասնութիւնը՝ ինքզինքին հպատակեցնելով իր վարդապետութեան եւ կարգին, վիզը ծռելով Յիսուսի լուծին տակ եւ ծառայելով եղբայրներուն շինութեան՝ այն շնորհներով զորս Աստուած զիրենք օժտած է, ինչպէս միասնական անդամներ միեւնոյն մարմինի, այնպէս որ այդ մարմինը լաւագոյնս ապրի: Ասիկա բոլոր սուրբերուն պարտքն է Աստուծոյ խօսքին համեմատ ինքզինքնին զատել անոնցմէ որոնք բնաւ երեղեցիէն չեն՝ միանալու համար այդ ժողովքին հոն, ուր Աստուած դրած է զայն՝ ինչ ալ ըլլան իշխանութեանց եւ իշխանաւորներուն արգելքներն ու հրահանգները՝ մինչեւ ծեծն ու մահուան սպառնալիքը: Նոյնպէս եւ անոնք, որոնք կը քաշուին ժողովքէն՝ Աստուծոյ հրամանին կը հակառակին:

Յօդուած 29

Կը հաւատանք որ պէտք է ուշիմութեամբ զանազանել եւ Աստուծոյ խօսքին համեմատ իմաստութեամբ գտնել, ո՛ր մէկն է ճշմարիտ եկեղեցին՝ բոլոր աղանդներէն աշխարհիս երեսը կան՝ իրենք զիրենք եկեղեցի անունով ճանչցնող: Ձենք խօսիք կեղծաւորներուն մասին, որ եկեղեցիէն ներս սողոսկած են՝ առանց վերջինիս մաս կազմելու, այլ կը խօսիք ճշմարիտ եկեղեցիին մասին, եւ յարաբերութեան մասին այլ բոլոր աղանդներու հետ, որոնք իրենք իրենց եկեղեցիի անունը կու տան: Ճշմարիտ եկեղեցին ճանչնալու յատկանիշներն են ասոնք. եկեղեցին կը քարոզէ զուտ Աւետարանը, կը գործածէ մաքուր վարչութիւնն եւ մասունքները, ինչպէս Քրիստոս հրամայած է, եւ եկեղեցւոյ կարգապահութիւնը կը կիրարկուի կեղծիքը սաստելու համար: Կարճ ըստած, եթէ ղեկավարութիւնը միայն Աստուծոյ խօսքով մերժելով անոր հակառակ կեցող բոլոր այլ բաները, Յիսուս Քրիստոսը մարմինին միակ գլուխը դաւանելով: Աստով ամէն մէկս կրնայ ճանչնալ ճշմարիտ եկեղեցին, եւ ո եւ է մէկը պէտք չէ անկէ գատուի: Գալով անոնց որոնք եկեղեցիին մէջ են՝ անոնք կը ճանչցուին քրիստոնեայի իրենց յատկանիշներով, այսինքն՝ հաւատքով եւ անով, որ Յիսուս Քրիստոսը իբրեւ միակ փրկիչն ընդունելով՝ մեղքէ կը փախչին, կը յարին արդարութեան, կը սիրեն ճշմարիտն Աստուած եւ իրենց մերձաւորը՝ առանց դառնալու աջ կամ ձախ, խաչ հանելով իրենց մարմինը իր գործերով ու փափաքներով մէկտեղ, ոչ թէ որովհետեւ մէջերին որ եւ է թերութիւն չկայ, այլ անով, որ ասոր դէմ Սբ. Հոգիով կը պայքարին իրենց կեանքի բոլոր օրերուն մէջ՝ դիմելով անընդհատ Տէր Յիսուսի արիւնին, մահուան, չարչարանքին եւ հնազանդութեան, որով իրենք ունին մեղքերու քաւութիւն՝ Անոր հաւատալով: Գալով կեղծ եկեղեցիին ինք իր պատուիրաններուն կը վերագրէ անելի՛ իշխանութիւն, քան Աստուծոյ խօսքին: Ինք Քրիստոսի լուծին տակ խոնարհիլ չ'ուզեր: Իր խորհուրդները չի բաշխեր Քրիստոսի խօսքին համեմատ, այլ անոնց վրայ կ'աւելցնէ եւ անոնցմէ կը բառնայ՝ իր հաճութեան համեմատ: Ան կը հալածէ զանոնք, որոնք կ'ապրին սրբօրէն՝ Աստուծոյ խօսքին համեմատ, որոնք կը մերժեն իր կեղծաւորութիւնը, ազահութիւնն ու կոռուպտութիւնը: Երկու այս եկեղեցիները մէկը միւսէն տարբերելը դիւրին է:

Յօդուած 30

Կը հաւատանք որ ճշմարիտ այդ եկեղեցին պէտք է կառավարուի հոգեւոր կարգ ու կանոնով, ինչպէս Տէրը իր խօսքին մէջ մեզ կը սորվեցնէ, այսինքն. հոն հաստատուած են հովիւներ, որոնք Աստուծոյ խօսքը կը քարոզեն եւ խորհուրդները կը կատարեն, կան վերակացուներ եւ սարկաւագներ՝ հիմիւն կողքին ըլլալու համար, այնուհետեւ եկեղեցիի խորհուրդը՝ իր միջոցաւ ճշմարիտ վարդապետութիւնը պահելու համար, որպէս զի ճշմարիտ դաւանութիւնը հաստատուն մնայ, նաեւ որպէս զի նենգ անիրաւները խրատուին հոգեւորապէս եւ սանձուած պահուին, նաեւ որպէս զի աղքատները, դժբախտներն ու տառապողները մխիթարուին իրենց պէտքերուն համեմատ: Այս միջոցներուն դիմելով է որ բոլոր բաները պիտի քալեն բարի կարգով եկեղեցիին մէջ, երբ ընտրուած պաշտօնեաները հաւատարիմ ըլլան եւ համաձայն Պօղոս առաքեալին՝ Տիմոթէոսին գրածին:

Յօդուած 31

Կը հաւատանք որ Աստուծոյ խօսքին ծառայակիցները, երէցներն ու սարկաւագները պէտք է ընտրուած ըլլան իրենց պաշտօններուն եկեղեցիին օրինական ընտրակարգով, Աստուծոյ անունը կանչելով, Աստուծոյ խօսքին պատուէրին համաձայն:

Ամէն մէկը պէտք է զգուշանայ ապօրէն միջոցներէ, այլ սպասէ Աստուծոյ կանչուելուն, որպէս զի իր կոչումին վկայութիւնը յայտնի ըլլայ՝ համոզուած ըլլալու որ այդ կոչումը իրաւացի Տէրութեանն է: Եւ խօսքի սպասաւորներուն գալով, ուր ալ ըլլան, պէտք է հաւասար իշխանութիւնն ու իրաւասութիւնը՝ ըլլալով միակ եկեղեցագետ եւ միակ վերակացու Յիսուս Քրիստոսի ծառաները: Առաւել, որպէս զի Աստուծոյ սուրբ պատուիրանը չխաթարուի եւ չարհամարհուի, կ'ըսենք որ ամէն մէկը պէտք է խօսքի սպասաւորներ ունենայ եւ եկեղեցիին երէցները մասնաւոր ակնածանքը վայելեն իրենց կատարած գործին, որ եկեղեցիին անդամները խաղաղութեամբ վարուին հետերնին՝ հնարաւորին չափ անտրտունջ, առանց վիճաբանութեան եւ հակառակութեան:

Յօդուած 32

Կը հաւատանք սակայն, որ թէեւ բարի է եւ օգտակար, որ եկեղեցիին վարիչները որոշակի կարգ ու կանոն հաստատեն եկեղեցիին հոգ տանելու համար, սակայն պէտք է զգոյշ ըլլան չչեղելու անկէ, զոր մեր միակ Տէրը՝ Յիսուս մեզի հրամայած է: Անոր համար է, որ կը մերժենք մարդկային բոլոր գիտները եւ օրէնքները, զորս մտցնելով՝ ոմանք կը փափաքին ծառայել Աստուծոյ՝ անոնցմով կապելով եւ գիրկին մէջ ճնշելով մարդոց խղճմտանքը սա կամ նա ձեւով: Ուստի կ'ընդունինք միմիայն ան որ յարմար է համախոհութիւնն եւ միութիւնը պահելու եւ սնուցանելու՝ պահպանել Աստուծոյ հանդէպ հնազանդութիւնը, որու համար անհատեան է բանադրանքը՝ կատարած Աստուծոյ խօսքին համեմատ՝ բոլոր յարակից բաներով:

Յօդուած 33

Կը հաւատանք որ բարին Աստուծոյ մեր սրտի կարծրութեան եւ անհաստատութեան համար մեզ հրամայած է խորհուրդները մեր մէջ կնքելու համար խոստումները՝ իբրեւ գրաւ ըլլալու Աստուծոյ՝ մեր հանդէպ բարի կամքին եւ ողորմութեան, նոյնպէս եւ սնուցանելու եւ արծարծելու համար մեր հաւատքը, որոնց վրայ Աստուծոյ անկողնուց Աւետարանի խօսքերը՝ մեր արտաքին զգայարաններուն վրայ ազդելու, մեզի լսեցնելով իր խօսքը, որպէս զի Ան բնակի եւ գործէ մեր ներսիդին՝ հաստատելու համար մեր փրկութիւնը, զոր ան կը հռչակէ: Վասն զի անոնց տեսանելի նշաններն ու կնիքներն են ներքին եւ անտեսանելի բաներուն, որոնց միջոցաւ Աստուծոյ կը գործէ մեր ներսիդին Սբ. Հոգիի զօրութեամբ: Այս նշաններն ուստի ունայն ու սին չեն՝ մեզ խաբելու եւ պատրելու, այլ Յիսուս Քրիստոսը ճշմարիտ կը պահեն, առանց որու իրենք ոչինչ պիտի ըլլային: Առաւել, մենք կը գոհանանք միայն այնչափ խորհուրդներով, որչափ Յիսուս մեր Տէրը մեզի տուած է, այսինքն ընդամենը երկուքով, որոնք են՝ մկրտութիւնն ու մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսի ընթրիքը:

Յօդուած 34

Կը հաւատանք ու կը դաւանինք որ Յիսուս Քրիստոսը, որ Օրէնքին լրումն է, իր թափած արիւնով վերջ տուած է ամէն արիւնոտ գոհաբերութեան, զոր մէկը կրնայ կամ կ'ուզէ մատուցանել իր ձեռքով՝ մեղքերու թողութեան եւ քաւութեան համար՝ ջնջելով թլփատութիւնը, որ նոյնպէս արիւնով կը կատարուէր, եւ անոնց փոխարէն հրամայած է մկրտութեան խորհուրդը, որմով Աստուծոյ եկեղեցիէն ներս կ'առնուինք ու զատուած բոլոր ժողովուրդերէ եւ օտար կրօնքներէ՝ կատարելապէս իրեն նուիրուած ըլլալու համար՝ կրելով իր յատուկ նշանը, որ մեզի իբրեւ վկայութիւն կը ծառայէ, որ Ան մեզի համար յաւիտենական Աստուծոյ կը մնայ՝ մեզի Հայր բարեխնամ ըլլալով: Ան հրամայեց ուստի մկրտել բոլոր իրենները Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ անունով, մաքուր ջուրով՝ խորհրդանշելով մեզի հետեւեալը. ինչպէս վրանիս թափած ջուրը կը լուսայ մարմինի

անմաքրութիւններ, նոյնպէս մկրտուողի մարմինին վրայ թափելով, Յիսուս Քրիստոսի արիւնը նոյնպէս կը գործէ ներսիդին՝ հոգիին վրայ, զայն լուալով եւ մաքրելով իր մեղքերէն՝ մեզ վերածնելով բարկութեան զաւկի վիճակէն դէպի Աստուծոյ զաւկի վիճակը: Ոչ միայն շօշափելի ջուրը կ'ընէ անիկա, այլ նաեւ լուացումն է Աստուծոյ Որդիի թանկարժէք արիւնով, որ մեր կարմիր ծովն է՝ որու մէջէջն պէտք է անցնինք փարաւոնի բռնութենէն, որս սատանան է, մտնելու համար Քանանի հոգեւոր հողին վրայ: Նոյնպէս եւ եկեղեցիի սպասաւորը մեզի կու տան Խորհուրդի իրենց մասը որ տեսանելի է, սակայն մեր Տէրը կու տայ ամէնը որ կ'իմաստաւորուի այս խորհուրդով, այսինքն՝ անտեսանելի ընծաներն ու գութերը՝ լուալով եւ մաքրելով մեր հոգիները բոլոր արատներէ եւ անմաքրութիւններէ, նորոգելով մեր սիրտերը եւ զանոնք լեցնելով ամէն մխիթարութեամբ, մեզի տալով ճշմարիտ վստահութիւնը հայրական իր բարութեան, մեզի զգեցնելով նոր մարդը եւ մեզ մերկացնելով հինէն՝ իր բոլոր գործերով: Ասոր համար կը հաւատանք որ ան որ կը յաւակնի յաւիտենական կեանքի հասնիլ, պէտք է մէկ անգամ միայն մէկ մկրտութեամբ մկրտուի՝ առանց զայն երկրորդելու, ինչպէս որ չենք կրնար երկու անգամ մարմնապէս ծնիլ: Այնուամենայնիւ մկրտութիւնը կը գործէ ոչ միայն երբ որ ջուրը վրանիս է, եւ երբ կ'ընդունինք զայն, սակայն օգուտը կը բերէ ամբողջ կեանքի ընթացքին: Ասոր վրայ կը մերժենք վերամկրտչականներուն մոլորութիւնը, որոնք բաւանակն չեն սեպեր մէկ մկրտութիւնը մէկ անգամ ընդունուած եւ ատկէ գատ կը դատապարտեն հաւատացեալներու մանուկ զաւակներու մկրտութիւնը, որոնք մկրտուած պէտք է ըլլան ըստ մեզ եւ կնքուած՝ Ուխտի նշանով ճիշդ ինչպէս ներածիւնները կը թլփատուէին Իսրայէլի մէջ՝ մեր զաւակներուն տրուած խոստումներու նման: Եւ ճշմարտութիւնն է որ Քրիստոս նուազ չափով արիւն թափած է՝ լուալու հաւատացեալներուն զաւակները՝ չափահասներու համար ըրած ըլլալով նոյնը, ահա ինչու երախաները պէտք է առնեն նշանը եւ խորհուրդը այն բանին, զոր Քրիստոս կատարած է իրենց համար: Ինչպէս Օրէնքի մէջ Տէրը կը հրամայէր էր իրենց հաղորդուիլ Քրիստոսի չարչարանաց եւ մահուան խորհուրդին երբ անոնք նորածին էին՝ զոհաբերելով իրենց համար գառմը, որ Յիսուս Քրիստոսի խորհուրդն է: Առաւել. Իսրայէլի ժողովուրդը կը թլփատուէր, եւ մկրտութիւնը նոյնն է մեր զաւակաց հանդէպ, ասոր համար է որ Պօղոս առաքեալը մկրտութիւնը Քրիստոսով թլփատութիւն կը կոչէ:

Յօդուած 35

Կը հաւատանք ու կը դաւանինք որ մեր փրկիչ Յիսուս Քրիստոս հրահանգած եւ հաստատած է վերջին ընթրիքի խորհուրդը կերակներլու եւ նեցուկ կենալու անոնց, որոնք վերստին ծնած են եւ ընտանիքին մաս կազմած: Վասն զի անոնք որոնք վերստին ծնած են, երկու կեանք ունին. մէկը մարմինին մէջ է եւ վաղանցուկ, զոր ունին աշխարհ գալէ ի վեր եւ որ ամէնուն հասարակաց է, եւ միւսը՝ հոգեւոր եւ երկնային, որ չնորհուած է իրենց վերստին ծնունով, որ ի կեանս կոչուած է Աւետարանի խօսքեով, հաղորդակցութեամբ Քրիստոսի մարմինի, եւ այդ կեանքը հասարակաց է միայն Աստուծոյ ընտրեալներուն միջեւ: Այնպէս Աստուած մեր մարմնաւոր եւ երկրաւոր կեանքը սատարելու համար կու տայ մարմնեղէն եւ նիւթեղէն հացը, որ ասոր կը յարմարի, եւ այդ հացը ամէնուն համար է՝ կեանքի պէս, սակայն հոգեւոր եւ երկնային կեանքը պահպանելու համար որ հաւատացեալներու մէջ է, անոնց ան ուղարկած է կենդանի հացը երկինքէն, այսինքն Յիսուս Քրիստոսը, որ կը սնուցանէ եւ ոտքի կը պահէ հաւատացեալներուն հոգեւոր կեանքը: Այդ հացը կ'ուտուի, այսինքն կ'ընդունուի եւ կը կիրարկուի հաւատքով՝ հոգիով : Երնաւոր եւ հոգեւոր այդ հացը տեսնելու համար, Քրիստոս հրահանգած է տեսանելի երկրաւոր հաց մը, որ իր մարմինին խորհուրդն է, մեզ հաւաստիացնելու համար, որ նոյժ չափ ճշմարիտ է, որ մենք այդ խորհուրդը ձեռքբերնիս կ'առնենք ու մեր բերնով կ'ուտենք ու կը խմենք, նոյնպէս կենդանի եւ կանգուն կը պահէ մեր հաւատքը (որ մեր հոգիին բերանն է ու ձեռքը), մենք հաղորդակից կը դառնանք մեր միակ փրկիչ Քրիստոսի ճշմարիտ մարմինին եւ արիւնին մեր հոգիներով, հոգեւոր մեր կեանքին համար: Վասն զի կասկած չի վերցներ, որ Քրիստոս այս խորհուրդը ընդունայն չէ որ

պատուիրեց մեզ: Մեկնելով Ան մեր մէջ կատարած է ամէն բան որ մեզ սրբազան նշաններով կը ներկայացնէ, առաւել՝ մեր ըմբռնումը գերազանցող կերպով եւ մեզի կը մնայ մասամբ անըմբռնելի իբրեւ Սբ. Հոգիի անիմանալի ներգործութիւնը: Սակայն ինքզինքնիս չենք խաբէր ըսելով որ մեր կերածը Գրիստոսի բնական եւ իրական մարմինն է եւ մեր խմածը՝ իր արիւնը, սակայն զայն ուտելու եւ խմելու մեր կերպը բերնով չէ, այլ՝ հաւատքի հոգիով: Այնպէս Յիսուս Գրիստոս կը մնայ միշտ նստած Աստուծոյ՝ իր Հօր աջ կողմը, սակայն չի դադրիր հետեւին հաւատքով հաղորդակցելէ: Այս ընթրիքը հոգեւոր սեղան մըն է որմով Գրիստոս ամէնուհետ կը հաղորդակցի բոլոր իր բարիքները մեզի վայելցնելով, ինչպէս իր մահով եւ չարաչարանսով՝ սնուցանելով զօրացնելով եւ մխիթարելով մեր թշուառ յուսահատ հոգին՝ տալով իր մարմինը որ ուտենք եւ արիւնը որ խմենք: Այնուհետեւ, թէեւ խորհուրդները իրենց խորհրդանշածին հետ կապակից են, ամէնք չէ, որ խորհուրդին զօրութեանը հաղորդակից կը դառնան. չարը խորհուրդը կ'առնէ դատապարտութան համար, առանց ընդունելու սակայն խորհուրդին ճշմարտութիւնը, ինչպէս Յուդա եւ Սիմոն Մոգը երկուքն ալ որ առած են գաւաթը, սակայն ոչ թէ Գրիստոսը՝ հաւատքով, Որ միմիայն սուրբերուն կը հաղորդուի:

Վերջապէս կ'ընդունինք սուրբ այս խորհուրդը Աստուծոյ մարդոց ժողովքին մէջ՝ խոնարհութեամբ եւ հեզութեամբ՝ մեր մէջ յիշատակելով մեր Փրկիչ Գրիստոսի մահը իր շնորհով, կը կատարենք մեր հաւատքին դաւանանքը եւ քրիստոնեայ կրօնքը: Ասոր համար է որ մէկը չգայ առնելու հաղորդութիւն առանց ինքզինք խորապէս քննելու՝ այդ հացն ուտելով եւ գաւաթը խմելով իր դատաստանի համար: Աւելի կարճ ըսած, սուրբ այս խորհուրդը կատարելով կը շարժինք Աստուծոյ եւ մեր հաւատակիցներուն հանդէպ վառ սէրով մը: Ասոր համար կը մերժենք իբրեւ սրբապղծութիւն բոլոր պախարակելի յօրինուած քներն ու զրոյցները, զոր մարդիկ աւելցուցած եւ խառնած են խորհուրդներուն եւ կ'ըսենք որ պէտք է գոհանանք այդ կարգով զոր Գրիստոս եւ իր առաքեալները սորվեցուցած են մեզի եւ խօսիլ այնպէս, ինչպէս իրենք խօսած են:

Յօդուած 36

Կը հաւատանք որ բարին Աստուած մարդկայնի ցեղիս անկումին պատճառաւ հաստատած է թագաւորներ, իշխաններ եւ խորհրդարաններ՝ կամելով որ աշխարհը կառավարուի օրէնքներով եւ քաղաքականութիւններով որպէս զի մարդոց գեղովմները սանձուին, եւ ամէն բան կատարուի բարի կարգով մարդոց միջեւ: Այդ նպատակաւ է որ ան իշխանաւորներու ձեռքը սուր դրած է շարերը պատժելու համար եւ բարի մարդիկը պաշտպանելու, եւ իրենց պարտականութիւնը միայն պաշտպանութիւնը եւ կառավարումը չէ, այլեւ աստուածապաշտութիւնը ջնջելու միտող ամէն կռապաշտութիւն եւ կեղծ պաշտամունք կասեցնելը, դերաքրիստոսի արքայութիւնը քանդելը, Աւետարանի խօսքը ամէն տեղ քարոզել տալը, որպէս զի Աստուած պաշտուի եւ փառաւորուի ամէն մէկէն, ինչպէս որ Աստուծոյ խօսքը կը պահանջէ: Առաւել, ամէն մէկը անկախ վիճակէն, կարգէն ու դիրքէն պէտք է հպատակի իշխանութեանց, վճարէ տուրքերն, յարգանք եւ մեծարանք տածէ եւ առ հասարակ հնազանդ ըլլայ ամէն բանի մէջ որ Աստուծոյ խօսքին հակառակ չէ՝ աղօթելով իշխանութեանց համար, որպէս զի Աստուած իրենց առաջնորդէ բոլոր իրենց ճամբաներուն վրայ, որպէս զի մենք խաղաղ կենք մը վարենք՝ ամենայն բարեպաշտութեամբ եւ խաղաղութեամբ: Ասոր վրայ կ'ատենք վերամկրտչականներուն եւ այլ հերձուածներուն մոլութիւնը, որոնք հասարակաց ինչքերի համայնքներ կազմելով՝ կը փափաքին մերժել իշխանութիւնն ու վարչութիւնը, յետս դարձնել արդարադատութիւնը եւ խառնակել Աստուծոյ սահմանած կարգ ու կանոնը:

Յօդուած 37

Վերջապէս կը հաւատանք Աստուծոյ խօսքին համեմատ, որ երբ որոշուած ժամանակը Տէրը վերադառնայ (օր մը գոր ոչ մէկ արարած գիտէ) եւ ընտրեալուն թիւը լման ըլլայ, մեր Տէր Յիսուս Քրիստոս մարմինով եւ տեսանելիօրէն երկինքէն պիտի գայ, նոյնպէս, ինչպէս որ հոն ելած էր, եւ մեծ փառքով եւ վեհութեամբ ինքզինք յայտարարելու համար դատաւոր կենդանիներու եւ մեռեալներու, կրակի եւ բոցի յանձնելու այս հին աշխարհը՝ զայն մաքրելու համար, եւ այդ մեծ Դատաւորին առջեւ պիտի գան կենալու մարդկային բոլոր արարածները՝ մարդ, կին ու երախայ, ապրած աշխարհիս սկիզբէն մինչեւ վերջ՝ կանչուած ըլլալով հրեշտակապետին ձայնով եւ աստուածային շնորհով, զի մինչ այդ մեռածները յարութիւն պիտի առնեն հողէն՝ ոգին վերադարձած ըլլալով նոյն այն մարմինին մէջ, որով այդ արարածը ապրած է: Իսկ այլ պահուն կենդանի եղողները բնաւ պիտի չմեռնին միւսներուն պէս, այլ պիտի փոխուին աչքը գոցել բանալուն պէս՝ ապականութենէն անապականութիւն: Այն ատեն գիրքերը պիտի բացուին (այսինքն՝ խղճմտանքները), եւ մեռելները պիտի դատուին այս աշխարհիս մէջ իրենց գործերուն համեմատ՝ չար եւ բարի, եւ մարդիկ հաշիւ պիտի տան իրենց արտասանած իւրաքանչիւր պարագայ խօսքին համար, զորս աշխարհը կատակ եւ զաւեշտ կը սեպէ, եւ գաղտուկ գործերն ու միտքերը յայտնի պիտի դառնան ամէնուն առջեւ: Ասոր համար է որ արդարութեամբ որ այդ դատաստանի մասին միտքը սոսկալի է եւ երկիւղ ազդող չարերուն, սակայն մեծ մխիթարութիւն մըն է ու բաղձանք՝ բարիներուն ու ընտրեալներուն, որովհետեւ իրենց կատարեալ քաւութիւնը պիտի կատարուի, իրենց բարի գործերուն վարձքը պիտի առնեն, իրենց անմեղութիւնը ամէնուն յայտնի պիտի դառնայ, իրենք պիտի տեսնեն սոսկալի վրիժառութիւնը զոր Աստուած պիտի ցուցնէ զիրենք հալածող, ճնշող եւ չարչարողներուն, որոնք պիտի համոզուին իրենց իսկ վկայութեամբ եւ պիտի դառնան անմահ այն կերպով, որպէս զի յաւիտեանապէս չարչարուին չմարող կրակին մէջ, որ սատանային եւ իր հրեշտակներուն սահմանուած է: Իսկ հաւատարիմներն ու ընտրեալները պիտի թագադրուին փառքով ու պատուով, Աստուծոյ Որդին իրենց անունները պիտի դաւանի Աստուծոյ՝ Իր Հօր առջեւ եւ ամէն արցունք պիտի սրբուի իրենց աչքերէն, իրենց դատը, որ բազմաթիւ իշխանաւորներն ու դատաւորները իբրեւ հերձուածող եւ չարագործ հռչակուած՝ պիտի դառնայ Աստուծոյ Որդիին դատը, եւ իբրեւ ձրի հատուցում Տէրը իրենց պիտի շնորհէ այնպիսի փառք մը, ինչպիսին մարդու սիրտը մինչեւ օրս չէ երագած: Ասոր համար է, որ անձկութեամբ կը սպասենք այդ մեծ օրուան՝ լիովի վայելելու համար Աստուծոյ խոստումները՝ Իր Որդի Յիսուս Քրիստոսին ձեռքով: